Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

368
Խ - 11

# ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՄ, ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

11 SEP 2013

43.824

«Հաստատում եմ»

Ի. Տ. Խ. Ս.Հ.Մ. Ֆինժողկոմի Յն. ԳԵՆԿԻՆ

12/XII 1930 թ.

I Ընդհանուր կանոններ

Շրջանային Գործադիր Կոմիտեներում, քաղխորհուրդներում և Գյուղխորհուրդներում պետական ապահովագրության աշխատանքների կազմակերպման կանոնադրություն.

Հրատարակվում է համաձայն Խ.Ս.Հ.Մ. Կ.Գ.Կ.-ի և Ժ.Կ.Խ.-ի 1930 թ. հունիսի 13-ի «գյուղական վայրերում պետական ապահովագրության ֆունկցիաների հանձնումը շրջանային գործկոմներին» վորոշման (որենք. ժողով. № 35 հոդվ. 337 1930 թ.), Խ.Ս.Հ.Մ. Ֆ.Ժ.Կ-ի 1930 թ. օգոստոսի 14-ի հաստատված կանոնադրության փոխարեն:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

### § 1. Պետական ապահովագրության գործարքներ կատարվում են՝

1) շրջաններում—շրջանային գործադիր կոմիտեների միջոցով, քաղաքներում, վորոնք մտնում են շրջանում քաղխորհուրդների միջոցով, գյուղերում—գյուղական խորհուրդների միջոցով:

2) Այն քաղաքներում, վորոնք առանձնացված են վարչա-տնտեսական միավոր, քաղաքային խորհուրդների միջոցով, իսկ այդ քաղաքներին միացված գյուղերում, գյուղխորհուրդների միջոցով:

Քաղաքներում, գյուղերում ապահովագրական գործի դրվածքի և ընթացքի ղեկավարությունը ու հսկողությունը հանձնվում է համապատասխան շրջանային գործադիր կոմիտեներին և քաղխորհուրդներին:

§ 2. Շրջանային գործադիր կոմիտեները և ֆաղխորհուրդները պատասխանատու յեն իրենց շրջանի կամ ֆաղաքի ապահովագրական գործի ընդհանուր դրվածքի համար, և մասնավորապես՝

1) Ապահովագրական գործի ընդհանուր կազմակերպման և ապահովագրական տեսուչների ընտրության համար՝

2) Պետապի բոլոր դիրեկտիվների և կարգադրությունների ճիշտ և ժամանակին կատարման համար:

3) Ապահովագրման յենթակա գույքի ճիշտ և ժամանակին գնահատման և հաշվառման կազմակերպման, ապահովագրական վճարումների հաշվարկման համար.

4) Ապահովագրական վճարումների իր ժամանակին և լրիվ գանձման, ինչպես և ապառությունների ֆոնդի ճիշտ և ժամանակին բաշխման համար.

5) Լուծարքային աշխատանքների ճիշտ կազմակերպման ու դրվածքի համար:

6) Ապահովագրական միջոցների պահպանման ու ոգտագործման կարգի մասին Պետապի բոլոր կարգադրությունների և ցուցմունքների ճիշտ և անշեղ կատարման, ինչպես և իր ժամանակին և լրիվ չափով Պետա-

1 MAR 2010

1464

ՀՍՍՀ—ССРА
им. Мясникяна
12398-57

ղի ապահովագրական գումարների փոխադրության համար տեղական վարկային ընկերությունների ընթացիկ հաշիվներից Պետապի մարմինների ընթացիկ հաշիվներին:

7)։ Ապահովագրական հաշվառման, հաշվետվության և գործավարության ճիշտ դրվածքի համար.

8)։ Գյուղխորհուրդների պետական ապահովագրության գործի նկատմամբ իր ժամանակին հրահանգման կազմակերպման համար:

§ 3 ա) Շրջանային գործադիր կոմիտեներում, քաղխորհուրդներում և գյուղխորհուրդներում ապահովագրական աշխատանքը կատարվում է համաձայն պետական ապահովագրության կանոնների, Ս.Խ.Հ.Մ. և Դաշնակից հանրապետությունների կառավարության հրատարակած օրենքների և կարգադրությունների: բ) Ս.Խ.Հ.Մ. Ֆ.Ժ.Կ-ի կողմից հաստատված ապահովագրական կանոնների, ապահովագրական տարիֆների և տարիֆային կանոնների համաձայն: գ) Պետապի հրահանգների, շրջաբերականների, դիրեկտիվների և կարգադրությունների համաձայն:

Պետական ապահովագրության վերաբերյալ պետապի բոլոր ուժի մեջ գտնվող (գործադրվող) կանոնները, տարիֆները, հրահանգները, դիրեկտիվները և կարգադրությունները անպայման պարտադիր են. շրջանային գործադիր կոմիտեների և քաղխորհուրդների ու գյուղխորհուրդների համար:

§ 4. Վորպեսզի շրջանային գործադիր կոմիտեները և քաղխորհուրդները իրագործեն իրենց վրա դրված պետական ապահովագրության նկատմամբ բոլոր պար-



տականությունները, նրանց ապարատում սահմանված է պետական ապահովագրության տեսչի պաշտոն:

Պետապահովագրության տեսուչները նշանակվում են, ազատվում են և տեղափոխվում են շրջգործկոմների և քաղխորհրդների կողմից, համաձայնեցնելով այդ Պետապի վարչության հետ:

Պետապահովագրության տեսուչների թիվը շրջանային գործադիր կոմիտեներում և քաղխորհուրդներում սահմանվում է հանրապետական Կ.Գ.Կ-ի կողմից, համաձայն Խ.Ս.Հ.Մ. Կ.Գ.Կ-ի «շրջանային գործադիր կոմիտեների ստրուկտուրայի ու հաստիքների» վորոշման Պետապի կողմից հատկացված վարկերի սահմաններում:

§ 5. Ամբողջ տեխնիկական գործավարությունը պետական ապահովագրության, ինչպես և ապահովագրական հաշվառումը ու հաշվետվությունը կատարվում է շրջանային գործադիր կոմիտեների և քաղխորհուրդների ընդհանուր ապարատի միջոցով պետապահովագրության տեսուչների ղեկավարությամբ ու պատասխանատվությամբ ապահովագրական փաստաթղթերի ճիշտ ձևակերպման և հաշվառման ու հաշվետվության նկատմամբ:

§ 6. Շրջանային գործադիր կոմիտեների, քաղխորհրդների և գյուղխորհրդների ապահովագրական ամբողջ աշխատանքը յենթակա յե հսկողության և ստուգման Պետապի մարմինների կողմից:

§ 7. Շրջանային գործադիր կոմիտեների, քաղխորհրդների ապահովագրական աշխատակիցների աշխատավարձը, ինչպես և այլ ծախսեր, վորոնք կապված

են այդ աշխատանքների կատարման ընթացքի հետ, վճարում են շրջանային գործադիր կոմիտեները և քաղխորհուրդները ի հաշիվ Պետապի, նրա կողմից հաստատված վարկերի սահմաններում:

Այդ գումարները գրանցվում են տեղական բյուջեյով և կարող են ծախսվել միմիայն իրենց նպատակին, այսինքն ապահովագրական աշխատանքների կատարման համար:

§ 8. Ապահովագրական գործարքների կատարման համար բոլոր անհրաժեշտ նյութերը (կանոններ, հրահանգներ, և այլն), ինչպես և զանազան բլանկներ և տպագրված ձևեր, շրջանային գործադիր կոմիտեներին և քաղխորհուրդներին մատակարարում է Պետապը:

### § 9. Շրջանային գործադիր կոմիտեները և քաղխորհուրդները ապահովագրական գործարքները կատարելու կարգով իրավունք ունեն՝

ա) Քննարկել և լուծում տալ բնակչության բողոքներին՝ պետական ապահովագրական գործի նկատմամբ.

բ) Դատական գործ հարուցել և այն վարել ըստ պետական ապահովագրության, հարուցել քրեական հետապնդություն, ներկայացնել քաղաքացիական հայցեր և ներկայացուցիչ դառնալ դատարաններում ու արբիտրաժ հանձնաժողովներում որպես հայցվոր կամ պատասխանող, ըստ պետական ապահովագրության գործերի:

## II. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղական խորհուրդները կատարում են հետևյալ



աշխատանքները, ըստ պետական ապահովագրության:

### § 10. Ըստ պարտադիր կոպարային ապահովագրության ձևակերպման

1) Կատարում են պարտադիր կոպարային ապահովագրության ենթակա անասունների և գյուղատնտեսական մշակույթների տարածության հաշվառում. պարտադիր կարգով ապահովագրված շենքերի փոփոխությունների հաշվառում, նոր կառուցվածների և վերակառուցվածների գնահատումն, ռեգիստրացիոն ցուցակների ուղղումներ:

2) Կազմում են այն տնտեսությունների ցուցակը, որոնք, համաձայն հրահանգի, իրավունք ունեն արտոնություններ ստանալու:

3) Գանձում են կոպարային ապահովագնի և հետնյութների վճարումները, բռնագանձում են տույժ՝ ժամանակին չմուծված ապահովագրական վճարումների համար:

4) Կատարում են կոպարային ապահովագրական վճարումների գանձման հաշվառում:

5) Շրջգործկոմների և քաղխորհուրդների հատուկ հանձնարարությամբ գյուղխորհուրդները կատարում են՝

ա) Շենքերի համատարած ցուցակագրություն և գնահատություն:

բ) Հաշվարկում են կոպարային պարտադիր ապահովագնի վճարումները և կազմում են ծանուցագրեր:

գ) Համապատասխան տնտեսություններին տրամադրում են արտոնություններ, ըստ պարտադիր կոպարային ապահովագրության:

6) Կազմում են սահմանված հաշվետվության իրենց կողմից հաշվառված ապահովագրության յենթակա շենքերի, կոպարի հաշվարկված գումարներով, հաշվի առնելով արտոնությունները և այլն:

7) Քննարկում են ապահովագրվողների կողմից ներկայացված հայտարարություններն ու դիմումներն ապահովագրված գույքի հաշվառման, սխալ հաշվարկման մասին, ըստ պարտադիր կոպարային ապահովագրության:

### § 11. Կամավոր ապահովագրությունների կնքելու մասին

Շրջանային գործադիր կոմիտեների և քաղխորհուրդների համաձայնությամբ կնքում են գույքի կամավոր ապահովագրության և կյանքի դժբախտ դեպքերի ապահովագրության պայմանագրեր, շրջգործկոմների և քաղխորհուրդների կողմից վորոշված չափերով ընդունում են կյանքի ապահովագրության վճարումները:

### § 12 Վնասների լուծարքի նկատմամբ

1) Պետապի հանրապետական վարչության կողմից սահմանված չափերով կազմում են գույքի և կյանքի ապահովագրության լուծարքային փաստաթղթեր, համաձայն Պետապի գլխավոր վարչության ցուցմունքների և անմիջապես ուղարկում են շրջանային գործադիր կոմիտեներին կամ քաղխորհուրդներին:

2) Այն բոլոր վնասների դեպքերում, վորոնց լուծարքային փաստաթղթերը պետք է կազմվեն շրջանային գործադիր կոմիտեների և քաղխորհուրդների կողմից, անմիջապես հայտնում են նրանց:



### § 13. Ըստ դրամական հաշվետվության

1) Բոլոր ստացված վճարումները, թե ըստ կոպարի և թե ըստ կամավոր ապահովագրության, վոչ ուշ քան վճարումների ստացման հետևյալ որը մուծում են շրջգործկոմի կամ քաղխորհրդի «ըստ պետական ապահովագրության գործառքների» ընթացիկ հաշվին բացված շրջգործկոմի կամ քաղխորհրդի կողմից շրջանի կենտրոնի վարկային ընկերության մոտ կամ պետբանկում:

Յեթե գյուղխորհուրդները հեռու յեն շրջանի կենտրոնից, ապա ստացված վճարումները հետևյալ որը հանձնում են մոտակա խնայողական դրամարկղին, անմիջապես շրջգործկոմի կամ քաղխորհրդի «ըստ պետական ապահովագրության գործառքների» ընթացիկ հաշվին փոխադրելու համար:

2) Բոլոր գանձված կամ ստացված գումարների մասին ներկայացնում են շրջգործկոմին կամ քաղխորհրդին համապատասխան տեղեկագիր:

3) Ապահովագրական միջոցներից վորևե ծախք անել կարող են միայն ամեն անգամ շրջգործկոմի կամ քաղխորհրդի հատուկ համաձայնությամբ:

Պետապի գումարների ոգտագործումը վորևե այլ նպատակի, կամ նրանց փոխադրության ուշացումը սահմանված ժամանակից ավելի ժամանակով թույլ չի տրվում վոչ մի դեպքում:

## III. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Շրջանային գործադիր կոմիտեները և քաղխոր-

հուրդները կատարում են հետևյալ աշխատանքները, ըստ պետական ապահովագրության:

§ 14. Պարտադիր կոպարային ապահովագրությունների ձևակերպման մասին

1) Գյուղխորհուրդներին հրահանգում են կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա օբյեկտների հաշվառման նկատմամբ, հսկում են այդ աշխատանքների ճշտիվ կատարմանը, տեղերում ստուգում են այդ հաշվառման աշխատանքների ճշտությունը, կազմում են ըստ շրջանի հաշվառված գույքի ամփոփ ցուցակներ:

2) Հրահանգում են կոլեկտիվ տնտեսություններին պետական ապահովագրության աշխատանքների նկատմամբ. ստուգում են նրանց կողմից կատարված ցուցակագրությունը, գույքի գնահատությունը և ապահովագրական վճարումների հաշվարկը:

3) Պետապի ցուցմունքների համաձայն մշակում են կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա առանձին տիպի շենքերի արժեքի նորմաներ՝ նրանց գնահատման համար:

4) Համաձայն մշակված նորմաների կատարում են շենքերի գնահատություն՝ Պետապի կողմից սահմանված ժամկետներում ու քանակով: Բացառիկ դեպքերում, յերբ անհրաժեշտ է կարճ ժամանակվա ընթացքում կատարել խոշոր քանակությամբ շենքերի գնահատություն, գործին մասնակից են դարձնում գյուղխորհրդներին (համատարածակ գնահատման դեպքում) և հատուկ աշխատակիցների, ստուգում են նրանց կողմից կատարված շենքերի գնահատման աշխատանքները:



5) Կազմում են կոպարային պարտադիր ապահովագրության հաշվարկը և ծանուցագրեր ապահովադրողներին: Պարտադիր կոպարային ապահովագրության հաշվարկը կազմելը, ինչպես և ծանուցագրեր գրելը հանձնարարում են գյուղխորհրդներին:

Այն դեպքերում, յերբ պարտադիր կոպարային ապահովագրության վճարումների հաշվարկ կազմելը և ծանուցագրերի գրելը հանձնարարվում է գյուղխորհուրդներին, հրահանգում են նրանց այդ աշխատանքների կատարման նկատմամբ և ստուգում են նրանց կողմից կատարված հաշվարկը:

6) Բաշխում են գյուղխորհուրդների միջև արտոնությունների ֆոնդը, ստուգում են գյուղխորհրդների կողմից կազմված արտոնության ստացողների ցուցակները և այն հաստատում են, թույլատրում են առանձին գյուղխորհուրդներին անմիջականապես բաշխելու արտոնությունների ֆոնդը, ըստ կոպարային պարտադիր ապահովագրության, հետևում են, վոր արտոնությունների ընդհանուր գումարը գերազանցի այն գումարը, վոր հաստատված է Պետապի կողմից տվյալ շրջանի համար, հսկում են գյուղխորհրդների կողմից արտոնությունների ֆոնդի ճիշտ բաշխմանը:

7) Ղեկավարում են շրջանի պարտադիր կոպարային ապահովագրի վճարումների գանձումները:

§ 15. Հանրայնացված գույքի ապահովագրության ձևակերպման նկատմամբ

1) Կատարում են ցուցակագրություն և հաշվառում հիմնարկների, ձեռնարկների և կազմակերպությունների հանրայնացված սեկտորի այն գույքի, վորը հա-

մաձայն գոյության ունեցող կանոնների յենթակա չե պարտադիր ապահովագրման գանձում են այդ օբյեկտների ապահովագրական վճարումները:

2) Հսկում են վոր ժամանակին ստացվեն ապահովագրական հայտագրերը և մուծվեն ապահովագրական վճարումները: Հետնույթը նույնպես գանձում են, ձեռք առնելով ապահովագրության կանոններով նախատեսված միջոցներ:

3) Ստուգում են ապահովագրվողների կողմից ներկայացված հայտագրերի և մուծումների հաշվարկի ճշտությունը:

4) Կատարում են հատուկ հաշվառում ստացված ապահովագրական վճարումների:

### § 16 · Կամավոր ապահովագրություններ կնքելու մասին

1) Կնքում են գոյություն ունեցող տեսակի գույքի կամավոր ապահովագրություն:

2) Ինքնուրույն կերպով ձևակերպում են կյանքի կոլեկտիվ ապահովագրություն՝ մահվան դեպքերից և հաշմանդամությունից, սուր-վարակիչ հիվանդություններից: Նույնպես ձևակերպում են Պետապի վարչության կողմից վորոշված չափերով դժբախտ պատահարներից ապահովագրություն:

Պետապի հանրապետական վարչության համաձայնությամբ ձևակերպում են, առանձին դեպքերում, մահվան դեպքից ապահովագրություն, ինչպես և դժբախտ դեպքի բոլոր տեսակի ապահովագրություններ:

3) Մահվան, ինչպես և դժբախտ դեպքի ապահովագրության հայտարարությունները, վորոնք պետք է



ձևակերպվեն Պետապի մարմինների կողմից, ընդունում են և ուղարկում Պետապի համապատասխան մարմնին, իսկ ապահովագրվել ցանկացողներին ուղարկում են բժշկական քննության:

4) Ստանում են թե նախորդ և թե նոր կնքված ապահովագրությունների ապահովագրական վճարները:

5) Վճարում են կյանքի ապահովագրության հետգնման գումարներ ըստ I և IV աղյուսակի ապահովագրության, նույնպես և աշխատավորական և գյուղացիական ապահովագրությունների նկատմամբ:

6) Առանձին գյուղխորհուրդներին հանձնարարում են գույքի կամավոր ապահովագրություն, ինչպես և կյանքի ապահովագրության պայմանագրեր կնքել վորոշ չափերով:

7) Մասնակից են դարձնում տեղական կազմակերպությունները գույքի կամավոր ապահովագրության և կյանքի պայմանագրեր կնքելու աշխատանքներին:

8) Հանրապետական Պետապի վարչության հանձնարարությամբ տանում են իրենց մոտ կյանքի ապահովագրության անձնական քարտեր:

9) Ստուգում են խնայդրամարկղների կյանքի ապահովագրության հաշվետվությունը:

### § 17 · Վնասների լուծարքի նկատմամբ

1) Ինքնուրույն կերպով լուծարքում են գույքի կամավոր ապահովագրության և կյանքի ապահովագրության վնասները Պետապի հանրապետական վարչության կողմից վորոշված գումարների սահմաններում համաձայն Պետապի գլխավոր վարչության ցուցմունքների:

2) Գյուղատնտեսական կուլտուրաների վնասները

լուծարքում են տեղական գյուղատնտեսի մասնակցությամբ:

3) Այն բոլոր վնասների դեպքում, վորոնց լուծարքումն իրենց հատկացված չափերից վեր է, անմիջապես հայտնում են Պետապի Հանրապետական վարչության, նույնպես և այն դեպքերում, յերբ լուծարքային փաստաթղթերի կազմելը շատ բարդ է ու դժվարին կամ յերբ ապահովագրվողի կողմից խախտված է ապահովագրության այս կամ այն կանոնը վորով բնականաբար կասկած է առաջանում վնասի վճարման նկատմամբ, անմիջապես հայտնում են Պետապի Հանրապետական վարչությանը:

4) Հրահանգում են գյուղխորհուրդներին վնասների լուծարքի նկատմամբ:

5) Հսկողության կարգով ստուգում են գյուղխորհուրդների կողմից կազմված լուծարքային փաստաթղթերը:

6) Ստուգում են կոլլեկտիվ տնտեսությունների կողմից կատարված վնասների լուծարքման ճշտությունը և հրահանգում են նրանց վնասների լուծարքման ասպարեզում:

### § 18. Հաշվետվության նկատմամբ

1) Տանում են ապահովագրական հաշվապահություն և վիճակագրություն, ըստ բոլոր տեսակի ապահովագրությունների, համաձայն Պետապի կողմից դրված հրահանգների:

2) Պետապի Հանրապետական Վարչության կողմից սահմանված ժամկետներին և նրա կողմից սահմանված ձևերով կազմում են ոպերատիվ, ֆինանսական և



վիճակագրական հաշվետվություն և ուղարկում են Պետապի վարչությանը:

3) Պահպանում են հաշվետվությունների բոլոր արդարացնող փաստաթղթերը, ըստ պետական ապահովագրության գործերի և ըստ Պետապի գումարների ծախսերի ու այդպիսիք ներկայացնում են ապահովագրական աշխատանքը ստուգելիս ու հետազոտելիս:

### § 19. Ապահովագրության միջոցների տնօրինության մասին

1) Ապահովագրական վճարների մուտքի, ինչպես և վնասների վճարման բոլոր դրամական գործարքները պետք է գրանցվեն շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղխորհրդի մատյաններում:

2) Պետապի բոլոր դրամական միջոցները պահվում են հատուկ «ըստ պետապահովագրության գործարքների» ընթացիկ հաշվում: Այդ ընթացիկ հաշիվները բացվում են այն շրջանային կենտրոններում, ուր կա պետբանկի բաժանմունք: Իսկ յեթե պետբանկի բաժանմունք չկա, ապա այն վարկային ընկերությունների մոտ, վորոնք սպասարկում են նաև շրջգործկոմներին ու քաղխորհուրդներին—դրամարկղային գործարքների ասպարեզում:

3) Պետապի գումարները վոչ ուշ քան հետեվյալ օրը նրանց ստանալուց հետո, մուծվում են վերահիշյալ ընթացիկ հաշիվները:

4) Թույլ չի տրվում բոլորովին պետապի գումարները գործադրել մի վորևէ այլ նպատակի, ինչպես և մեկ օրվանից ավել պահել իրենց դրամարկղներում: Նույնպես արգելվում է պետապի կողմից սահմանված

լիմիտից բարձր գումարներ պահել «ըստ պետապահովագրության գործարքների» ընթացիկ հաշիվներում:

5) Հետևում են որ իր ժամանակին գյուղխորհուրդները և կոլտնտեսությունները փոխանցեն իրենց հասանելիք պետական ապահովագրության վճարումները շրջգործկոմի «ըստ պետական ապահովագրության գործարքների» ընթացիկ հաշվին:

### § 20. Պլանային աշխատանքների և տարերային դժբախտությունների դեմ պայքարի միջոցների բաշխման մասին

1) Համաձայն պետապի մարմինների դիրեկտիվների և ցուցմունքների, կազմում են օպերատիվ ֆինանսական պլանների նախագծեր և ուղարկում են պետապի հանրապետական վարչությանը՝ ընդհանուր օպերատիվ ֆինանսական պլանի մեջ մտցնելու համար:

2) Համաձայն պետապի հանրապետական վարչության պլանային ցուցմունքների, բաշխում են շրջաններին և քաղաքներին Պետապի ընդհանուր յեկամուտներից տրամադրված միջոցները, հրդեհների և այլ տարերային դժբախտությունների դեմ պայքարելու նպատակով:

3) Հսկում են դժբախտ տարերային դեպքերի կանխման միջոցների ու պայքարի աշխատանքներին և այդ նպատակների համար հատկացված գումարների նպատակահարմար ու ռացիոնալ գործադրմանը. ներկայացնում են պետապի հանրապետական վարչությանը սահմանված ձևի հաշվետվություն՝ այդ գումարների ծախսման մասին:



1464

4) Ուսումնասիրում են ապահովագրության բարձր վնասաբերության աղբյուրները:

### § 21. Պետական ապահովագրությունը բնակչությանը ծանոթացնելու նկատմամբ:

1). Շրջգործկոմին, քաղխորհրդին և գյուղխորհրդներին կից կազմակերպում են ապահովագրական սեկցիաներ:

2) Խրճիթ-ընթերցարաններում կազմակերպում են ապահովագրական անկյուններ:

3). Տալիս են զեկուցումներ պետապահովագրության մասին գյուղխորհուրդներին, հասարակական կազմակերպություններին, քաղաքացիների ժողովներին, շրջգործկոմի պլենումներին, խորհուրդների համագումարին:

4) Գյուղխորհուրդներին ծանոթացնում են ամեն տարի կոպտրային ապահովագրության պլաններին:

5) Տեղական մամուլում լուսաբանում են պետական ապահովագրության հարցերը:

### § 22. Պետապահովագրության տեսուչների պարտականությունները շրջանային գործադիր կոմիտեներում և քաղխորհուրդներում:

1) Պետապահովագրության տեսուչը անմիջապես յենթարկվում է շրջանային գործադիր կոմիտեյի կամ քաղխորհրդի նախագահության անդամներից վորևէ մեկին:

2) Շրջգործկոմները կամ քաղխորհուրդները նշանակում են մեկ պատասխանատու անձնավորություն պետապահովագրության տեսուչին փոխարինելու համար՝ նրա բացակայության ժամանակ:



ՀՍԽՀ - ССРА
им. А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12398-57

3) Պետապահովագրության տեսուչը կատարում է հետևյալ աշխատանքները:

ա) Անմիջապես հրահանգում է բոլոր այն աշխատակիցներին, որոնք տվյալ շրջանում կամ քաղաքում կատարում են պետապահովագրական աշխատանքներ:

բ) Անմիջականորեն հետևում է, որ ժամանակին կատարվեն կոպարային պարտադիր ապահովագրության կամպանիայի բոլոր աշխատանքները, մանավանդ ժամանակին գանձվեն կոպարային բոլոր ապահովագրական վճարումները:

գ) Հրահանգում է շրջգործկոմի և քաղխորհուրդների այն աշխատակիցներին, որոնց հանձնարարված է պետապահովագրության աշխատանքներ տանելը. հաշվապահությանը (վնասների վճարման ձևակերպման կարգը, համարակալված նյութերի հաշվառումը, ֆինանսական հաշվետվության կարգերը), վիճակագրությանը (վիճակագրության մշակումը, հաշվետվության կարգերը), ընդհանուր գործավարությանը (ապահովագրության ձևակերպումը և ապահովագրական գործավարություն), գյուղատնտեսներին (կարկտահարության վնասների լուծարքը և այլն):

դ) Ստուգում է լուծարքային փաստաթղթերը, կազմված գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների կողմից և տալիս է նրանց նկատմամբ իր յեզրակացությունը, Պետապի պատասխանատվության մասին:

ե) Անմիջականորեն լուծարքում է վնասները:

Ծանոթ. Վնասները հաստատվում են շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահության այն անդամի կողմից, որը տանում է ապահովագրական աշխատանքները:



զ). Շրջգործկոմների և քաղխորհուրդների տեխնիկների մասնակցությամբ մշակում է շենքերի գնահատության նորմաներ, կատարում է գնահատման աշխատանքներ, յեթե գնահատման աշխատանքներ հանձնարարված են հատուկ հրավիրված մարդկանց, հսկում է այդ աշխատանքների կատարմանը և ստուգում է այն տեղում:

է) Հասարակական կազմակերպություններին մասնակից է դարձնում ապահովագրական աշխատանքներին, հրահանգելով նրանց ապահովագրական աշխատանքները:

ը) Քննում է բնակչության կողմից տրված գանազան դիմումները ապահովագրական աշխատանքների նկատմամբ, ինչպես և այն բոլոր բողոքները՝ տրված սխալ ապահովագրական վարձատրության վճարումների նկատմամբ. տալիս է նրանց մասին իր յեզրակացությունը՝ շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահության համար:

թ). Ուսումնասիրում է ապահովագրության բարձր վնասաբերության աղբյուրները և միջոցներ մշակում նրանց դեմ պայքարելու համար:

ժ) Անմիջականորեն մասնակցում է ապահովագրական սեկցիայի կազմակերպմանը:

ժա) Զեկուցում է շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահությանը պետական ապահովագրության գործերի դրության մասին, այդ աշխատանքների դրվածքի բարելավման միջոցների մասին տվյալ շրջանում կամ քաղաքում:

4). Ապահովագրական տեսուչը պատասխանատու

170-
43.824

յե բոլոր նրան տրված խնդիրների և աշխատանքների ճիշտ ու ժամանակին կատարման համար․ իսկ մասնավորապես պատասխանատու յե․

ա) շրջգործկոմների, քաղխորհուրդների, գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների և հասարակական կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների հրահանգման գրության ու փորձի համար։

բ) Շրջգործկոմների և քաղխորհուրդների ապարատի միջոցով կազմված ու ձևակերպված ապահովագրական փաստաթղթերի ճշտության համար, նրանց կողմից տարվող հաշվառման ու հաշվետվության ճշտության համար։

Նրանց կողմից կատարված վճարների լուծարքային աշխատանքների ժամանակին ու ճիշտ կատարման համար, գյուղխորհուրդների կողմից կազմված լուծարքային փաստաթղթերի ստուգման փորձի համար։

գ) Շենքերի գնահատման և վերագնահատման աշխատանքները ժամանակին կազմակերպելու և ճշտությամբ գործադրելու համար։

ե) այն բոլոր հարցերի մասին, վորոնց նկատմամբ նա իրավասու չէ լուծում տալու, իր ժամանակին շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահության զեկուցելու համար։

ԽՍՀՄ Պետապի գլխավոր վարչություն

Ատենապետություն՝ Ի. ՌԶՈՒ

12 դեկտեմբերի 1930 թ. Մոսկվա

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվ. 6194. (բ) Գլավլիտ 88

ՀՀ Ազգային գրադարան
NL0218922